

Հայտարարություն

Լոռու մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու մասին

Լոռու մարզպետարանը հայտարարում է **մրցույթ՝ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 95-3.2-Մ3-1)** քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար: **Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 95-3.2-Մ3-1)**

Մասնակցում է՝

-տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի մարզային էջի ինֆորմացիոն սպասարկման (տեղադրման, թարմացման) և շտեմարանների վարման աշխատանքներին.

- մարզում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին.

-զբոսաշրջության ոլորտի գրանցամատյանների կազմման, վարման, թարմացման, վարչական ռեգիստրի ներդրման, վարման և տեղեկատվական բազայի ստեղծման աշխատանքներին.

-այլ երկրների համապատասխան մարմինների և միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների հետ հարաբերություններում Հայաստանի Հանրապետությունը և մարզը ներկայացնելու, բանակցային գործընթացի իրականացման, զբոսաշրջային բնագավառում մարզին վերաբերող համագործակցության փաստաթղթերի, ծրագրերի մշակման աշխատանքներին.

-Բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի կազմմանը.

- իրականացնում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված այլ լիազորություններ.

Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 95-3.2-Մ3-1) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ է.

-բարձրագույն կրթություն.

-հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում մեկ տարվա աշխատանքային ստաժ

-սույն պաշտոնի հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

-համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

-անհրաժեշտ կոմպլեքսային տիրապետում

Պայմանագրի գործողության ժամկետն է՝ մինչև ժամանակավոր թափուր պաշտոնի հիմքի վերացումը 24.07.2021թ.

Վերը նշված պաշտոնը կարող են զբաղեցնել տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները:

Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:

Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տատապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Լոռու Մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

-գրավոր դիմում (լրացվում է տեղում)

-կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները, աշխատանքային գրքույկի պատճենը կամ աշխատանքային ստաժը հավաստող համապատասխան տեղեկանք (ներ)

-արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք

-մեկ գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի

-անձնագրի պատճենը

Ընտրությունը կատարվում է ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և հարցազրույցի միջոցով

Աշխատավարձի չափը՝ 175932 (մեկ հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ

Աշխատավայրը՝ ք. Վանաձոր, ՀՀ Լոռու մարզպետարան, Հայքի հրապարակ 1

Փաստաթղթերն ընդունվում են՝ 2020թ-ի հուլիսի 29-ից ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

ՀՀ Լոռու մարզպետարանում ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող եք դիմել ՀՀ Լոռու մարզպետարան (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, հեռ.2-10-24)

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020թ-ի հուլիսի 31-ը ժամը 12.30-ը: